ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՔԻ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ê ³Ñ³Ï¹áõË ï
êÛáõÝ»óÇ

Սյունյաց Երկիր

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016Թ.
№ 42 (418)

www.syuniacyerkir.am

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ

VIII դ

Սրբուհի Մարիամ, անապական դաճար
Եվ կենսատու էության ծնող եւ մայր.
Օրհնյալ ես դու կանանց մեջ,
Բերկրյալ տիրամայր եւ կույս:

Անդասպան հոգեւոր եւ
համապայծառ ծաղիկ,
Որ քո մեջ հովանավորված
հոգեհոս անձրեւով
Պտղաբերեցիր Հորից՝
մարդկանց հայտնելով,
Օրհնյալ ես դու կանանց մեջ,
Բերկրյալ տիրամայր եւ կույս:

Հաստատություն երկնքի եւ երկրի,
Կենդանությունների բաշխող,
Որ ասպվածային լույսի
ճառագայթներով վար իջած՝
Նախահորը վերականգնեց անկումից.
Օրհնյալ ես դու կանանց մեջ,
Բերկրյալ տիրամայր եւ կույս...

Կապույտ վառելիքը մուտք գործեց մեղրեցու բնակարան

Դեկտեմբերի 21-ին իրականություն դարձավ մեղրեցիների վաղեմի երազանքներից մեկը՝ կապույտ վառելիքը մուտք գործեց նրանց բնակարաններ: Դեռեւս 2004 թվականին ստորագրվել էր Իրան-Հայաստան գազատարի կառուցման վերաբերյալ համաձայնագիրը, գազատարը կառուցվել էր 2004-2007 թվականներին, սակայն բնական վառելիքն անհասանելի էր մեղրեցիներին:

Տարիներ ի վեր տարածաշրջանի գազիֆիկացումն օրակարգում էր, ուստի հասկանալի է մեղրեցիների անափ բերկրանքը: Քաղաքի Ադելյան փողոցի 11 շենքի բակում տոնական տրամադրություն էր, սեղանները՝ ծանրաբեռ Մեղրու բերք ու բարիքով: Հանդիսությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը, Մեղրու համայնքապետ Մխիթար Զաքարյանը, «Գազպրոմ-Արմենիա» ընկերության Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Վահե Հակոբյանը, գազիֆիկացման աշխատանքների մասնակից իրանական «Սաներջի» ընկերության աշխատակիցներ, շինարարներ, հյուրեր: Մեղրեցիներին շնորհավորանքի խոսք հղեց համայնքապետ Մխիթար Զաքարյանը, ով մասնավորապես նշեց, որ կարճ ժամանակամիջոցում կգազիֆիկացվեն Ագարակ քաղաքը եւ Լեհվազ գյուղը: Մեղրեցիներին նշանակալի իրադարձության առթիվ բարեմաղթանքի խոսք հղեց Սյունիքի փոխմարզպետ Վարդան Դավթյանը՝ համոզմունք հայտնելով, որ տարածաշրջանի գազիֆիկացումը ոչ միայն կնպաստի տնտեսության զարգացմանը, այլեւ բարեկեցություն կստեղծի մեղրեցու օջախում: Մեղրեցիների անունից երախտագիտության խոսք ասաց Բորիկ Քարամյանը:

Մարզային եւ քաղաքային իշխանությունների ղեկավարները, գազիֆիկացման գործի պատասխանատուները շրջայց կատարեցին Ադելյան փողոցի թիվ 16 շենքի բնակարաններում, որտեղ արդեն բոցկլտում էր կապույտ վառելիքը: Մարդիկ սրտանց շնորհավորում էին միմյանց, մանավանդ որ դրսում ձմեռն իր լիիրավ իրավունքների մեջ է մտել, եւ բնակարաններում նորմալ ջերմաստիճան ապահովելու խնդիր կա:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ê áëù ²Ù ³ ÝáñÇ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ

Հարգարժան սյունեցիներ

Հաշված օրեր անց 2016 թվականը կդառնա պատմություն: Անցնող տարին Հայաստանի ու հայության համար լի էր կարեւոր իրադարձություններով: Տոնելով մեր անկախության 25-ամյակը՝ մենք եւս մեկ անգամ վերահաստատեցինք, որ մեր անվտանգ գոյության եւ բարգավաճման գրավականն անկախ հայկական պետականությունն է: Մենք դա ապացուցեցինք ոչ միայն գործով, մեր պատրաստակամությամբ, ներդրած ջանքերով, այլ նաեւ կյանքի գնով, ինչի վկայությունն ապրիլյան քառօրյա պատերազմն էր, երբ հերթական անգամ հայ ժողովուրդն ու հայ զինվորն ապացուցեցին սեփական հողում ապրելու իրավունքի համար պայքարելու իրենց հաստատակամությունը: Բնականաբար, ողջ հայ ժողովրդի ներդրման մեջ այս գործում իրենց պատվարժան ներդրումն ունեցան Սյունիքն ու սյունեցիները, ովքեր առանց մեկ վայրկյան իսկ երկմտելու, ձեռնամուխ եղան Արցախի անվտանգության ապահովման գործին:

Չնայած դժվարություններին՝ մեզ հաջողվեց ապահովել Արցախի ու Հայաստանի միջեւ կենսական կապը, իսկ մեր սյունեցի աշխարհազորայիններն էլ իրենց կյանքի գնով ապացուցեցին, որ հայրենիքի սահմաններն ամուր ու կուռ են, ինչպես միշտ: Մենք ցավում ենք կորստի համար եւ գլուխ խոնարհում մեր բոլոր նվիրյալ մարտիկների շիրիմներին:

Սիրելի հայրենակիցներ

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ գալիք Նոր տարին ու Սուրբ ծնունդը:

Ավարտվող տարին պատշաճ առիթ է ամփոփելու մեր ձեռքբերումները եւ ուղենշելու անելիքները: Անցնող տարում մեզ հաջողվել է գրեթե 100 տոկոսով իրականացնել պետական բյուջեից մարզին հատկացված միջոցներով նախատեսված բոլոր ծրագրերը՝ ընդհանուր 8.2 մլրդ դրամ արժողությամբ: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2016 թվականին մարզի սոցիալ-տնտեսական զարգացման գործում իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել մարզում գործող ձեռնարկությունները: Բավական է նշել, որ միայն «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից մարզում իրականացվել են շուրջ 350 մլն դրամ արժողությամբ սոցիալական, ենթակառուցվածքային ու բարեգործական ծրագրեր:

Հարկ եմ համարում ընդգծել, որ գալիք տարում մենք եւս հանձնառու ենք լայն թափով իրականացնել մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր: Մեր գերակայությունների թվում է շարունակելու լինել հավելյալ ներդրումների ներգրավումն ու մեր ռեսուրսների արդյունավետ դիվերսիֆիկացիան:

Միանալով Ձեր օջախներում շուտով հնչելիք բազմաթիվ շնորհավորանքներին, հարգելի սյունեցիներ, ուզում եմ խոստովանել, որ իմ մեծագույն ցանկությունն է՝ տեսնել մեր միասնական ջանքերը, նվիրումն ու պատրաստակամությունը մեր մարզի ու պետության զարգացման գործում:

Թող գալիք տարին մեզ համար լինի առանցքային ու բեկումնային ձեռքբերումների տարի:

Թող 2017 թվականը Ձեր ընտանիքների համար լինի հաջողությունների տարի:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

ՄՀԵՐ ՊՈԼՈՍԿՈՎ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Սիրելի՛ բարեկամներ

Պատմության գիրկն է անցնում 2016 թվականը: Մենք հրաժեշտ ենք տալիս աշխատանքային ձեռքբերումներով նշանավորված, պատերազմական տագնապներն ու դժվարությունները հաղթահարած տարվան՝ հավատով, որ 2017 թվականը Հայաստան-Արցախի, Սյունյաց երկրի, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, մեր ընտանիքների համար դառնալու է նոր նվաճումների նախադուռ:

Վերջին տարիներին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը որդեգրել է ինչպես իր աշխատակիցների ու նրանց ընտանիքների, այնպես էլ տարածաշրջանի բնակչության հանդեպ բարձր սոցիալական պատասխանատվության քաղաքականություն: Մենք՝ Սյունիքի մարզպետարանի հետ համագործակցած, շարունակելու ենք իրականացնել սոցիալական եւ բարեգործական բազմաթիվ հասցեական ու ծավալուն ծրագրեր՝ ուղղված աշխատավոր մարդկանց հանգստի կազմակերպմանը, բժշկական սպասարկման եւ կյանքի որակի բարելավմանը: Կոմբինատը 2017 թվականին եւս հովանավորելու է հանրային մի շարք ծրագրեր՝ դրանով իսկ օժանդակելով հայրենիքի պաշտպանունակության ամրապնդմանը, մշակույթի, գիտության, կրթության, բժշկության, սպորտի, քաղաքաշինության զարգացմանը:

Մենք շահագրգիռ ենք, որ ձեռնարկության աշխատակիցները, նրանց ընտանիքները, բոլոր սյունեցիներն ապրեն բարեկարգ քաղաքներում ու շեներում, հարմարավետ տներում եւ բնակարաններում, ունենան կայուն աշխատանք, իրենց ազատ ժամանակը հետաքրքիր կազմակերպելու, երեխաներին լավ դպրոցներում ուսումնառության տալու եւ նրանց հետագա կրթությունն ապահովելու հնարավորություն:

«Բարեկեցություն բոլորի համար» կարգախոսը հայրենիքի հոգսերով ապրելու մեր սկզբունքային դիրքորոշման ուղենիշն է լինելու նաեւ գալիք տարում:

Թանկագի՛ն հայրենակիցներ, ի սրտե շնորհավորելով Ամանորի եւ Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ, բոլորիդ մաղթում եմ խաղաղ ու ստեղծարար օրեր, հաջողություններ անձնական կյանքում եւ աշխատանքում:

Շնորհավոր Նոր տարի:

ԱԶԱՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ

«Մեղրու ՃՇՇՁ» ՍՊ ընկերության տնօրեն

Ժամանակը դանդաղորեն մեզ մոտեցրել է 2016 թվականի վերջնագծին, ինչպես ասում են՝ եկել է քարերը հավաքելու ժամանակը, ասել է թե հանրագումարի բերելու արվածն ու չարվածը, նախանշելու անելիքները:

Մեղրեցի ճանապարհաշինարարների համար 2016-ը նշանավորվեց նոր գործերով: Մեր ընկերության աշխատողների ուժերով վերակառուցվեց Մեղրի քաղաքի խմելու ջրի ներքին ցանցը, շուտով շահագործման կհանձնվի Ագարակի գնդի զորանոցը, 2016-ին սկսել ենք եւ 2017-ին շահագործման կհանձնվի Մեղրի-Երեւան միջպետական ճանապարհի 258 կիլոմետրի հատվածում գտնվող կամուրջը: Իսկ ամենանշանակալի իրադարձությունը փետրվարի 6-ին էր, երբ հանրապետության նախագահի մասնակցությամբ տեղի ունեցավ Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի բացման արարողությունը: Մեր ընկերության աշխատակիցները եւս մի անգամ օրինական հպարտություն ապրեցին՝ սոցիալական այդ կարեւոր օբյեկտը հանձնելով շահագործման:

Մեղրեցի ճանապարհաշինարարները միշտ հայոց բանակի կողքին են եղել, օգնել են թե՛ շինանյութով, թե՛ տեխնիկայով, բարեկարգել են դեպի մարտական դիրքեր տանող ճանապարհները:

Այս ամենն աննկատ չի մնացել: Բանակաշինության գործում ունեցած ավանդի համար պարգեւատրվեցի պաշտպանության նախարարության «Դրաստամատ Կանայան» մեդալով, իսկ դեկտեմբերի 20-ին արժանացա «Համազգային վստահություն» խորհրդի կողմից անցկացված մրցանակաբաշխության «Հայաստանում որակյալ ճանապարհաշինական աշխատանքներ իրականացնող տարվա հմուտ ղեկավար» անվանակոչման: Այդ ամենը նախեւառաջ կոլեկտիվի հաջողությունն եմ համարում:

Այս օրերին մեր ճանապարհաշինարարներն իրականացնում են ձմեռային սպասարկման աշխատանքներ: Ինչպիսի անբարենպաստ եղանակ լինի, որքան էլ առատ լինեն ձնատեղումները, մանավանդ Ամանորի եւ Սուրբ ծննդի օրերին, ընկերության ճանապարհաշինարարները պատրաստ են միշտ բանուկ պահել Մեղրին արտաքին աշխարհի հետ կապող միջպետական եւ համայնքային նշանակության ճանապարհները…

Շնորհավորանքս եմ հղում մեր բոլոր հայրենակիցներին՝ մայր հայրենիքում եւ արտերկրում, մաղթում հույս, հավատ, սեր, բոլոր նվիրական իղձերի իրականացում:

Թո՛ղ բարեբեր լինի 2017 թվականը եւ խաղաղության ու հաջողության տարի:

ՏԵՐ ՄԱԿԱՐ ՎՐԴ. ՀԱԿՈԲՅԱՆ

Առաջնորդական տեղապահ Սյունյաց թեմի

Սյունյաց հնամենի թեմի, Թեմական խորհրդի հանուր կազմի եւ Թեմական Առաջնորդիս անունից մեր սրտագին ամանորյա շնորհավորանքն ենք բերում համայն հայության զավակներին գալիք Ամանորի եւ Աստվածահայտնության տոների առթիվ: Հին տարին բեկումնալից եւ բախտորոշ իրադարձություններով աչքի ընկավ աշխարհասփյուռ հայության կենսաճանապարհին: Բարեբախտաբար, հայ ժողովուրդն իր ճշմարիտ հավատքի, հայրենասիրության, բարեպաշտության եւ անկոտրում ոգու ուժով կարողացավ վերստին նվաճել իր լինելիության իրավունքը՝ շարունակելով իր հաղթական երթը:

Ուստի թող «Քրիստոս ծնավ եւ հայտնեցավ» ամենազոր ավետիսով օրհնյալ լինի գալիք տարին՝ հայ ժողովրդին եւ մասնավորաբար հավատավոր սյունեցիներին ուղղորդելով դեպի ճշմարիտ բարեպաշտություն՝ ի բարօրություն Հայոց եկեղեցու բարեշինության եւ փառավորման:

Թող Տիրոջ կամոք հետայսու մշտանորոգ հույս, հավատ եւ սեր տիրի յուրաքանչյուր հայորդու հոգում եւ սրտում:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ:

ՎԱՉԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սյունիքի մարզի դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական

Հարգելի սյունեցիներ

Շնորհավորում եմ բոլորիդ Նոր տարին եւ Սուրբ ծնունդը: Ցանկանում եմ, որ 2017թ. լինի սյունեցիների եւ ողջ հայ ժողովրդի համար հաջողությունների ու հաղթանակների տարի: Հասնենք էլ ավելի մեծ բարձունքների բոլոր ասպարեզներում, եւ թող մեր երկիրը շարունակի ծաղկել ու հզորանալ: Թող այս հին տարին տանի Ձեզանից բոլոր տխրությունները ու դժվարությունները, իսկ գալիք տարին բերի ուրախություն, երջանկություն եւ բարեկեցություն Ձեր ընտանիքներին:

Շնորհավոր Նոր տարի եւ Սուրբ ծնունդ:

ԴՄԻՏՐԻ ՈՒՇԿՈՎ

«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Սիրելի սյունեցիներ

Կապանի լեռնահարստացման կոմբինատի անունից ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ գալիք Ամանորի եւ Սուրբ ծննդի տոների առթիվ, մաղթում՝ ամուր առողջություն, բազում հաջողություններ եւ անսահման երջանկություն:

Ամանորը լավ հնարավորություն է ամփոփելու անցնող տարվա արդյունքները, գնահատելու ձեռքբերումներն ու վերլուծելու բացթողումները, նոր լավատեսությամբ եւ ավյունով ծրագրելու անելիքները: «Պոլիմետալի» ժամանակակից տեխնոլոգիաների, որդեգրած առաջադեմ չափորոշիչների, Կապանի ԼՀԿ-ի՝ տասնամյակներով հղկված բարոյական ու աշխատանքային ավանդույթների եւ քարից հաց քամող հայի աշխատասիրության համատեղումն ամենամոտ ապագայում անճանաչելիորեն բարեփոխելու են կոմբինատը: Այս առիթն օգտագործելով՝ եւս մեկ անգամ ընդգծում եմ՝ «Պոլիմետալը» պահպանում եւ զարգացնում է կոմբինատ-համայնք հարաբերություններում արդեն ձեւավորված բարին ու դրականը եւ ուշադիր ուսումնասիրում նախկին փորձը՝ դրանից դասեր քաղելու եւ կոմբինատի գործունեությունը բնապահպանական, սոցիալ-տնտեսական տեսանկյուններից անշեղորեն բարելավելու նպատակով:

«Պոլիմետալի» ներկայությունը ձեր տարածաշրջանում առաջիկայում դուք կզգաք ավելի ու ավելի առարկայորեն: Տարեմուտին Կապանի ԼՀԿ-ն, ղեկավարվելով «Պոլիմետալի» սոցիալական քաղաքականության սկզբունքներով, սոցիալ-տնտեսական համագործակցության համաձայնագիր կնքեց Կապան համայնքի հետ, որում երկարատեւ ու մանրամասն վերլուծության հիման վրա ներառվել են համայնքի համար ամենահրատապ եւ անհետաձգելի լուծում պահանջող խնդիրները: Համաձայնագրի կենսագործումը կլինի ձեր տեսադաշտում, ձեր վերահսկողության ներքո, դրա արդյունքները ձերն են, դա արվելու է ձեզ համար:

Ամանորն ամենաջերմ եւ բարի տոներից է մեր կյանքում, որը բոլորս նախընտրում ենք նշել ընտանիքում՝ հարազատների միջավայրում:

Եվս մեկ անգամ շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ, թո՛ղ խաղաղ լինի հայոց երկինքը, թո՛ղ բոլորիդ օջախներում զրնգա մանկան կենսախինդ ծիծաղը, թո՛ղ ձեր ընտանիքներում տիրեն համերաշխությունն ու հարազատական ջերմությունը:

ՎԱԼԵՐԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ.

«2017-ին բոլորին ցանկանում եմ անփորձանք ծառայություն»

Հարցազրույց ՀՀ զինված ուժերի չորրորդ բանակային զորամիավորման հրամանատար, գնդապետ Վալերիկ Քոչարյանի հետ

– Պարոն գնդապետ, ի՞նչով նշանավորվեց 2016 թվականը հայոց ազգային բանակի համար ընդհանրապես եւ Ձեր հրամանատարության ներքո գտնվող կորպուսի համար մասնավորապես:

– 2016-ը ՀՀ զինված ուժերում նշանավորվեց նրանով, որ մենք մի քանի քայլ առաջ գնացինք բանակի մարտունակության բարձրացման գործում: Կարեւորն այն է, որ ապրիլյան պատերազմի ժամանակ ՀՀ զինված ուժերը եւս մի անգամ ապացուցեցին, որ ի զորու են կատարել իրենց առջեւ դրված մարտական առաջադրանքները. այսինքն՝ ապահովել հայրենի եզերքի պաշտպանությունը, անհրաժեշտության դեպքում կանգնեցնել հակառակորդին եւ ապահովել մեր ժողովրդի անվտանգությունը: Կարեւոր իրադարձությունը դա եմ համարում անցնող տարում, որ փառքով կատարեցին ՀՀ զինված ուժերի մարտիկները, ինչու չէ, նաեւ երկրապահ կամավորական այն տղաները, ովքեր արագ արձագանքեցին մարտադաշտ մեկնելու կոչին՝ վերստին հաստատելով օրհասական ժամին մեր ազգի միասնությունը, հաստատակամությունը, արհավիրքի դեմ միահամուռ կանգնելու պատրաստակամությունը: Եվ դա էր երաշխիքը, որ հակառակորդն ավելի ագրեսիվ գործողությունների չդիմեց:

Իսկ ինչ վերաբերում է իմ հրամանատարության ներքո գտնվող զորամիավորմանը, 2016-ին լայնածավալ աշխատանք ենք կատարել հանրապետության Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի սահմանների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ՝ հնարավորություն տալով մեր համաքաղաքացիներին հայրենի բնօրրանում խաղաղ կյանքով ապրել, զբաղվել հանրօգուտ աշխատանքով: Եվ, բնականաբար, աշխատանքներ ենք տարել՝ բարձրացնելու զինվորների մարտունակությունը:

– Ինչպիսի՞ն է օպերատիվ վիճակը հայ-ադրբեջանական շփման գծի նախիջեւանյան հատվածում, որի պաշտպանությունը վստահված է Ձեր զորամիավորման հրամանատարներին եւ զինվորներին:

– Օպերատիվ վիճակը վերահսկվում է մեր կողմից: Հրադադարի ռեժիմի խախտման դեպքեր իմ անձնակազմի կողմից վերահսկվող տարածքներում չեն գրանցվել, զորքերի մարտունակությունը պատշաճ մակարդակի վրա է, որը թույլ է տալիս, որպես հրամանատար, զեկուցել, որ չորրորդ բանակային կորպուսի զորամասերը մարտունակ են եւ պատրաստ են կատարելու իրենց առջեւ դրված խնդիրները: Կարծում եմ՝ բոլորս համոզված ենք, որ սահմանը հուսալիորեն հսկվում եւ ամուր պաշտպանված է:

– Երբեմն ավագ սերնդի ներկայացուցիչները քննադատում են կրտսերներին, մեղադրում նրանց հայրենասիրության պակասի մեջ, բայց ապրիլյան պատերազմը, ինչպես երեւաց, հակառակն ապացուցեց: 18-20-ամյա երիտասարդները ոչ միայն հետ մղեցին հակառակորդի լայնածավալ գրոհը, որ ուղեկցվեց նաեւ մարտական նորագույն տեխնիկայի կիրառմամբ, այլեւ ստիպեցին հակառակորդին հետ կանգնել ագրեսիվ նկրտումներից:

– Բոլոր ժամանակներում ավագները թերահավատորեն են վերաբերվում կրտսեր սերնդին, մեր պապերը միշտ կրկնում էին, որ իրենք հաղթել են Մեծ հայրենականում, բայց տարակուսում էին, որ Աստված մի արասցե, եթե մի պատերազմ լինի, ով պիտի զենք բռնի: Քավ լիցի, այսօր այդ մասին չենք մտածում, քանզի բազմիցս ապացուցվեց, ոչ միայն ապրիլյան գործողությունների, այլեւ Արցախյան պատերազմի ժամանակ, հայ զինվորն ամուր կանգնել է մարտական դիրքում, կատարել իր առջեւ դրված խնդիրը: Այս վերջին կռվում էլ ժամկետային զինվորն ապացուցեց, որ իրեն կարելի է վստահել: Վկան՝ ապրիլյան պատերազմի ժամանակագրությունը, որը եւս մի անգամ հաստատեց, որ զինվորների բարոյահոգեբանական պատրաստականությունը բարձր մակարդակի վրա է, եւ բոլորը դույզն-ինչ կասկածի նշույլ չպիտի ունենան եւ համոզված լինեն, որ երիտասարդները պատրաստ են կատարելու մարտական առաջադրանքները: Ճիշտ է, ապրիլյան պատերազմի ժամանակ կամավորները, աշխարհազորայինները դիրքեր շտապեցին՝ կանգնելու երիտասարդ զինվորի կողքին, բայց, կարծում եմ, արդեն ժամկետային

էջ 7

ՏԻԳՐԱՆ ՓԱՐՎԱՆՅԱՆ.

«Երբ հայոց սահմանին վտանգ է սպառնում, ժողովուրդը թողնում է ամեն ինչ եւ դառնում մեկ բռունցք՝ մեկ նպատակով»

Հարցազրույց ՀՀ զինված ուժերի առաջին բանակային զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Տիգրան Փարվանյանի հետ

– Պարո՛ն Փարվանյան, 2016թ. մեր ժողովրդի պատմության մեջ նախեւառաջ կմնա որպես ապրիլյան քառօրյա պատերազմի տարի:

– Չնայած լայնածավալ գործողությունները ծավալվեցին ապրիլ ամսին, բայց դեռեւս 2016թ. հունվարից մեր հակառակորդը սկսել էր իրեն անհանգիստ պահել, առավել հաճախակի էին դարձել կրակոցները: Այդ ամբողջ ժամանակահատվածում արժանի պատասխան ստանալով՝ մասամբ հանդարտվում էին, մինչեւ ապրիլյան չարաբաստիկ օրերը: Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը սկսվեցին թշնամու լայնածավալ դավադիր գործողությունները: Իհարկե, փառք ու պատիվ մեր բանակին, որ կարողացավ իր գործողություններով կանգնեցնել, հետ շպրտել հակառակորդին: Հակառակորդը մինչ օրս էլ անընդհատ սադրիչ գործողությունների է դիմում՝ տարբեր հետախուզական խմբեր ուղարկելով, խախտելով հրադադարի ռեժիմը:

Ապրիլյան քառօրյա պատերազմը հայ ժողովրդի պատմության մեջ, իհարկե, իր հետքը թողեց, բայց այն կարեւոր էր նախեւառաջ նրանով, որ այդ օրերին ժողովուրդը թե՛ ՀՀ-ում, թե՛ սփյուռքում դարձավ բռունցք, մեկ մարմին, որ կանգնեց հայոց բանակի թիկունքին, որպեսզի դավադիր, արյունոտ դնչով շունը չկարողանա հատել մեր սահմանը: Թշնամին զգաց, որ օրեցօր հզորանում ենք եւ չնայած նրանց՝ տարբեր երկրներից ձեռք բերված նորագույն զինտեխնիկային, քանակային առավելությանը՝ հայ զինվորն իր ոգով ու մարտական պատրաստվածությամբ կարողացավ զսպել հակառակորդին: Մշտապես եղել եմ այն համոզման, որ կարեւորը մարդու ոգին է, որը կարող է մղել նրան հերոսական քայլերի՝ պաշտպանելով հայրենիք, ազգ, սրբություն, հող, ջուր… Իսկ մեր զինվորի մարտական ոգու բարձրությունը գագաթնակետին է հասել, մեր ժողովուրդն այդ ոգով է ապրել եւ ապրում: Ճիշտ է, մեր երկրում տարբեր խնդիրներ կան, բայց երբ հայոց սահմանին վտանգ է սպառնում, ժողովուրդը թողնում է ամեն ինչ եւ դառնում մեկ բռունցք՝ մեկ նպատակով: Բոլորիս սրբություն հայրենիքը միահամուռ է դարձնում մեր ժողովրդին, եւ հենց դա է մեր հիմնական ուժը:

– Այդ օրերին երկու անգամ մեր ստեղծագործական խումբն առաջնագծում Ձեզ հանդիպեց եւ արձանագրեց զորքի պատրաստվածության բարձր մակարդակ:

– Պատերազմի առաջին պահերին հնարավոր է՝ լինեն զինվորներ, ովքեր ինչ-որ առումով չկարողանան կողմնորոշվել: Բայց եթե նրանց գլխավերեւում կան մարդիկ, ովքեր սառնասրտորեն են վերաբերվում ստեղծված իրավիճակին եւ վերադասից ստացված յուրաքանչյուր հրահանգ ժամանակին կատարում, ապա ամեն ինչ կարգավորվում է: Վախը մարդկային զգացմունք է, որ յուրաքանչյուր գիտակից մարդու բնորոշ է, այստեղ հարցն այն է, թե դու ինչպես կկարողանաս այն կառավարել: Զինվորին՝ զորամաս մտնելու առաջին իսկ պահից, սովորեցնում ենք հաղթահարել այդ վախը եւ հոգեբանորեն պատրաստում ամենավատ իրավիճակներին: Եթե զինվորը դադարի պատրաստ լինելուց, կապ չունի պատերազմական թե խաղաղ օրեր են, ուրեմն կարող ենք համարել, որ բանակ, զինված ուժեր չունենք: Իր մարտունակությամբ, հաստատակամությամբ ու գործողություններով մեր բանակն ապացուցեց, որ լավագույններից է: Բնական է, որ կլինեն թերություններ, դա ոչ ոք չի ժխտում: Ինչպես չկա անթերի մարդ, այնպես էլ չի կարող մեկ օրգանիզմ համարվող բանակը լինել անթերի: Եթե որեւէ ստորաբաժանում ինձ զեկուցի, որ թերություններ չունի, ես կասեմ, որ այնտեղ չեն աշխատում, կառույցը չի գործում: Եթե այս պահին ասենք, որ մեր բանակում թերություններ չկան, ուրեմն կանգ ենք առել եւ այլեւս առաջ շարժվել, զարգանալ հնարավոր չէ. կյանքը կանգ չի առնում, ուստի նրան համընթաց պետք է քայլենք, որ չկործանվենք:

– Ապրիլյան պատերազմի օրերին եւ հետագայում էլ մամուլում հաճախ էր շեշտվում, որ դասեր չենք քաղում, բայց ամիսներ հետո ականատես եղանք արմատական փոփոխությունների, որոնք իրա-

էջ 7

ԱՇՈՏ ՄԻՆԱՍՅԱՆ

Սյունիքի տարածաշրջանային մաքսատան պետ

Սիրելի՛ հայրենակիցներ

2016 թվականը մեր երկրի, ժողովրդի տարեգրության մեջ նախեւառաջ կմնա որպես հայրենիքի պաշտպանության, հայ մարդու գիտակցված համախմբման, հայ զինվորականի, կամավորականի անմնացորդ նվիրումի տարի:

Ցավոք, կրկին կանգնեցինք մեր սահմաններն անառիկ ու ամբողջական պահելու, խաղաղություն կերտելու դժվարին, բայց մեր ժողովրդին քաջածանոթ ճանապարհին: Ապրիլյան քառօրյա պատերազմը հայ ժողովրդին ստիպեց կրկին վերապրել Արցախյան առաջին պատերազմի ցավը, անմեղ զոհեր տալ, տագնապել, բայց եւ միեւնույն ժամանակ մեզ հավերժ ժառանգություն տրված հայկյան ուժով ու կամքով համախմբվել, հաղթական պահեր ապրել:

Սակայն հայոց պանթեոնները համալրվեցին նոր զոհերով՝ արժանանալով հավերժ հիշատակի: Պատերազմի լուրն առնելուն պես շատերը նետվեցին մարտի դաշտ՝ մեծ թե փոքր, ահել թե ջահել, փորձառու թե անփորձ... Հայ մարդն աշխարհին եւս մեկ անգամ ցուցանեց, որ հայրենիքին սպառնացող վտանգի դեպքում դառնում է բռունցք, մեկ մարմին, որ զոհասեղանին է դնում իր կյանքը:

Բոլորս քաջ գիտակցում ենք, որ խաղաղության ու անվտանգության հարցը դեռ երկար ժամանակ կմնա հայկական երկու հանրապետության պետական քաղաքականության, զինված ուժերի, առհասարակ հայ մարդու գերխնդիրը: Ուստի յուրաքանչյուրս մեր հնարավորությունների սահմաններում պարտավոր ենք աջակցել այդ խնդրի լուծմանը եւ հասնել այն գիտակցության, որ խաղաղությունը, զինական հզոր ուժի հետ մեկտեղ, հաստատվում է փոխըմբռնման շնորհիվ:

Տարեմուտի հակասական զգացումներով, որ մարդ սովորաբար ունենում է անցնող տարվա դժվարությունների եւ հաջողությունների ամփոփման պահին, շնորհավորում եմ ողջ հայ ժողովրդին Նոր տարվա եւ Սուրբ ծննդի կապակցությամբ:

Մարտահրավերների, բազում խնդիրների առաջ կանգնած մեր երկրի պետական գործիչներին մաղթում եմ քաղաքական հասուն միտք, ժողովրդավարական գործելակերպ, հայոց սահմաններին՝ խաղաղություն ու անվտանգություն, հայ զինվորին՝ զգոնություն, քաջություն, հայ կամավորին՝ պատրաստակամություն եւ վերջապես հայ մարդուն՝ առողջություն, համբերություն, հաջողություն ու երջանիկ օրեր:

Տա՛ Աստված, որ 2017թ. ամփոփելիս արձանագրենք միայն ձեռքբերումներ:

❄

Սյունիքի մարզը 2016 թվականին. Ուշագրավ իրադարձություններ

1 25 տարի առաջ հայոց աշխարհի վրա վերստին ճառագեց անկախ պետականության աստղը: Այդ կապակցությամբ Սյունիքում տեղի ունեցան բազում միջոցառումներ: Հոբելյանի առիթով լույս տեսավ նաեւ «Սյունյաց երկիր» թերթի հատուկ համար:

2 2016թ. փետրվարի 6-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով եղել է Սյունիքի մարզում: Նախագահը մասնակցել է Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի բացմանը:

3 2016թ. փետրվարի 14-ին Տաթեւ նորակազմ համայնքում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

4 Գառնանը գործարկվեց Մեղրու ոռոգման ինքնահոս համակարգի առաջին փուլը:

5 Ապրիլի 2-ին Ադրբեջանը լայնածավալ ագրեսիա սկսեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ: Չորս օր տեւած պատերազմը ոտքի հանեց ամբողջ Սյունիքի չափահաս բնակչությանը: Սյունիքի բոլոր շրջաններից կամավորական ջոկատներ մեկնեցին ռազմաճակատ:
Սյունեցի 13 կամավորականներ ու զինվորականներ նահատակվեցին այդ պատերազմում:

6 Ապրիլի 14-ին Տաթեւի վանական համալիր այցելեցին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն:

7 Մայիսի 9-ին, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի մասնակցությամբ, Գորիսում բացվեց հուշակոթող` Արցախյան գոյամարտի նահատակների հիշատակը հավերժացնող:

8 Ապրիլի վերջից Կապանի հանքարդյունաբերական ամենախոշոր ձեռնարկությունը` լեռնահարստացման կոմբինատը, դարձավ ռուսական «Պոլիմետալ» բաժնետիրական ընկերության մի մասը:

9 Օգոստոսի 17-ին ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանն այցելեց Մեղրու տարածաշրջան:

10 Վերաօծվեցին Արծվանիկի Սուրբ Աստվածածին (5 հուլիսի

2016թ.), Շիկահողի Սուրբ Հովհաննես Նախավկա (6 օգոստոսի 2016թ.), Սեւաքարի Սուրբ Հռիփսիմե եկեղեցիները (27 սեպտեմբերի 2016թ.):

Սեպտեմբերի 18-ին եւ հոկտեմբերի 2-ին մարզում տեղի ունեցան ՏԻՄ ընտրություններ: Քաղաքային համայնքների ղեկավարներ ընտրվեցին՝ Մեղրիում՝ Մխիթար Զաքարյանը, Գորիսում՝ Վաչագան Ադունցը, Քաջարանում՝ Մանվել Փարամազյանը, Կապանում՝ Աշոտ Հայրապետյանը, Սիսիանում՝ Արթուր Սարգսյանը:

12 ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 6-ի որոշմամբ Սյունիքի մարզպետ նշանակվեց Վահե Հակոբյանը, ով մինչ այդ աշխատում էր «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 1-ին տեղակալ:
Հոկտեմբերի 10-ին նորանշանակ մարզպետին Սյունիքի հանրությանը ներկայացրին ՀՀ նախարարներ Դավիթ Լոքյանն ու Դավիթ Հարությունյանը:

13 Նոյեմբերի 4-ին ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը ԼՂՀ աշխատանքային այցից առաջ Գորիսում հանդիպեց Սյունիքի մարզի համայնքների ղեկավարների հետ:

14 Հոկտեմբերի 29-ին Թալիշում կանգնեցվեց խաչքար՝ ապրիլյան պատերազմում նահատակված սյունեցիների հիշատակը հավերժացնող:

15 Դեկտեմբերի 8-ին ՀՀ նախագահ, ՀՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար Սերժ Սարգսյանն այցելել է սյունիքյան զորամասերից մեկը, մասնակցել նորակառույց զինավանի բացմանը:

ø³ éÛñÛ³ å³ ï»ñ³ ½ÙáõÙ ½áÑí³ Í ëÛáõÝ»óÇÝ»ñÁ



Մայիս Երջանիկի Միրզոյան (Դարբաս համայնքի ղեկավար) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Արմեն Մինասի Բեգլարյան (Ախլաթյան համայնքի ղեկավար) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին



Սեդրակ Սերգեյի Ասրյան (Դարբաս) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Սերգեյ Գուրգենի Դանղյան (Սիսիան) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին



Դավիթ Բագրատի Սարգսյան (Բալաք) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին



Եղիշե Արտավազդի Նիկալյան (Լծեն) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Էդուարդ Յուրիկի Ալեքսանյան (Սիսիան) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Կարո Ծերունի Համբարձումյան (Վաղատին) - կամավորական, վիրավորվել է 2016թ. ապրիլի 4-ին, մահացել ապրիլի 18-ին

Արմեն Արեգի Հովհաննիսյան (Ծղուկ) - կամավորական, վիրավորվել է 2016թ. ապրիլի 4-ին, մահացել ապրիլի 7-ին



Գագիկ Կոլյայի Փարսադանյան (Կապան) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին

Արմեն Կառլենի Գասպարյան (Կապան) - կամավորական, զոհվել է 2016թ. ապրիլի 6-ին

Նորիկ Ժորայի Գասպարյան (Կապան) - ժամկետային զինծառայող, զոհվել է 2016թ. ապրիլի 2-ին



Նարեկ Վարդանի Մկրտչյան (Գորիսի տարածաշրջանի գյուղ Որոտան) - ժամկետային զինծառայող, զոհվել է 2016թ. ապրիլի 3-ին

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կապանի համայնքապետ

Սիրելի՛ կապանցիներ, հարգելի՛ հայրենակիցներ

Սրտանց շնորհավորում եմ բոլորիդ՝ Ամանորի եւ Սուրբ ծննդի կապակցությամբ:

Տարվա ամենացուրտ եղանակին տոնում ենք ամենաջերմ ու գեղեցիկ տոնը, որն ուրախություն եւ նոր սպասումներ է բերում թե՛ մեծերին, թե՛ մանուկներին: Եվ այս տոնի հետ են կապվում անցած տարվա հետահայաց գնահատումը եւ ապագայի անելիքներն ու ծրագրերը:

Մաղթում եմ, որ 2017 թվականը մեր երկրին, մեր համայնքին եւ յուրաքանչյուրիդ ընտանիքին բերի բարեկեցություն, առողջություն, երջանկություն, սեր եւ համերաշխություն, նորանոր ձեռնարկներ, բարի փոփոխություններ:

Թո՛ղ տոնն այցելի ամեն հայ մարդու օջախ, եւ տարեմուտն ազդարարող զողանջները ամենքիդ պարգեւեն հարազատ մարդկանցով շրջապատված լինելու երջանիկ զգացողությունը, թո՛ղ անցած եւ գալիք տարիները բաժանող պահն անմոռանալի լինի ձեզ համար:

2016 թվականը դժվարին էր մեր հայրենիքի համար. վրա հասան ապրիլյան ծանր օրերը, եւ մեր քաղաքն ունեցավ անդառնալի եւ ցավալի կորուստներ, ինչպես նաեւ, մեկ անգամ եւս ցույց տվեց իր հերոսական ոգին եւ միասնականությունը:

Ուստի, կարեւորելով բոլորիս համար անչափելի արժեքը, մեր երկրին, նախեւառաջ, մաղթում եմ խաղաղություն, ինչպես նաեւ՝ խաղաղություն եւ ներդաշնակություն՝ բոլորիդ ընտանիքներում, մարդկային բոլոր հարաբերություններում:

Եվ ցանկանում եմ, որ 2016 թվականից մեզ հետ 2017 թվական տանենք միայն բարի եւ գեղեցիկ հիշողությունները:

Ցանկանում եմ նաեւ, որ Կապանը թե՛ գալիք, թե՛ հետագա տարիներին իր ամեն բնակչի համար լինի եւ մնա նրա ներկայի եւ ապագայի քաղաքը:

Սրան, իհարկե, պետք է հասնենք միահամուռ ջանքով եւ բարի կամեցողությամբ, ամենքս՝ մեր իրավունքների եւ պարտականությունների հստակ գիտակցումով:

Եվս մեկ անգամ շնորհավորելով Նոր տարվա եւ Սուրբ ծննդի տոների առիթով՝ մաղթում եմ, որ իրականանան բոլորիդ նվիրական իղձերը, որ ամեն բացվող օրն իր հետ բերի բարիք եւ լիություն, որ հաջորդ տարեմուտին ունենանք առավել քիչ հոգսերով քաղաքացիներ եւ համայնք:

Ջերմառա՛տ օրեր, բարի՛ ակնթարթներ, բազո՛ւմ հաջողություններ եւ խաղաղ երկինք՝ ձեզ:

Բարի՛ Ամանոր բոլորիս: ■

ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

Քաջարան քաղաքային համայնքի ղեկավար

Սիրելի՛ սյունեցիներ, անցնող 2016 թվականն իրադարձային էր մեր երկրի, մարզի, համայնքների համար: Տարին նշանավորվեց թե՛ ձեռքբերումներով, թե՛ կորուստներով: Ցավոք, խաղաղ չէին երկրի սահմանները, տեսանք ապրիլյան պատերազմ, ունեցանք կորուստներ: Նշանակալի փոփոխություններ, տեղաշարժեր եղան քաղաքական դաշտում: ՏԻՄ ընտրություններն աշխուժացրին համայնքային կյանքը: Շատ խնդիրներ արդյունավետ լուծումներ ստացան: Լիահույս եմ, որ 2017 թվականը կնշանավորվի նոր հաջողություններով, ձեռքբերումներով, հաղթանակներով: Խաղաղություն հայոց աշխարհին, բարի տունդարձ հայ զինվորին:

Թո՛ղ գալիք տարին մեր ժողովրդին բերի կայունություն, բարեկեցություն, ապագայի հանդեպ վստահություն: Մեր կյանքը բարեփոխելու վճռականությամբ դիմավորենք 2017թվականը:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ: ■

ՎԱՉԱԳԱՆ ԱԴՈՒՆՑ

Գորիս համայնքի ղեկավար

Սիրելի՛ հայրենակիցներ

2016 թվականն ամփոփելուց առաջ ցանկանում եմ անսպառ առաջ եւ հաջողություն ցանկալ յուրաքանչյուր գորիսեցու, սյունեցու եւ հայի:

Երբ ճանապարհում ենք հին տարին եւ պատրաստվում դիմավորել նորը, ակամայից հաշվի ենք նստում անցած տարում ձեռքբերված հաջողությունների, արված գործերի ու չիրականացված ծրագրերի հետ:

2016 թվականին քիչ չէին խոչընդոտներն ու դժվարությունները: Խաղաղ չէին Հայաստան աշխարհի գարնանային արեւածագերը: Իրականացվեց համայնքների խոշորացման գործընթացը: Արդեն ծրագրած անելիքներին գումարվեցին տասը համայնքի հոգսերը: Հաջողություններ էլ գրանցեցինք՝ հաղթահարեցինք եւս մեկ ընտրություն, որի արդյունքում Գորիսի համար կրածս պատասխանատվությունը տասնապատկվեց:

Ծրագրեր էլ շատ ունենք, որոնք արդեն իրականացման նոր փուլ են մտել: Վստահ եմ, որ ոչ միայն 2017 թվականին, այլեւ առաջիկա հինգ տարիներին, միասին շատ աշխատանքներ ենք անելու, կերտելու ենք 21-րդ դարի Գորիսը: Չեմ սիրում խոստումներ տալ, միայն ասեմ, որ Գորիս համայնքն իր տասը բնակավայրով մշտապես գտնվելու է իմ եւ համայնքապետարանի աշխատակազմի ուշադրության կենտրոնում:

Նոր տարին նոր հույսեր, նոր ուժ եւ նոր գաղափարներ է բերում իր հետ: Այդ նորերի հետ մաղթում եմ առողջություն բոլորիս, խաղաղություն մեր աշխարհին:

Թո՛ղ Ամանորի զանգերը խիղդ ու սեր բերեն ձեր օջախներին, եւ ի կատար ածվեն այն բոլոր մաղթանքներն ու նպատակները, որոնք Նոր տարվա գիշերը կհնչեցվեն տոնական սեղանների շուրջ:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ: ■

ՄԽԻԹԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ

Մեղրի համայնքի ղեկավար

Սիրելի՛ հայրենակիցներ

Հերթական անգամ գտնվում ենք հին ու նոր տարիների ճամփաբաժնում, որի մի կողմում պատմություն դարձող նորագույն անցյալն է՝ որոշակի գնահատականներով, մյուսում նոր ակնկալիքներն են:

Անցնող տարին, նախեւառաջ, մեր տարածաշրջանի համար նշանակալի իրադարձություն գրանցեց: Տարիների ընդմիջումից հետո նորից միավորվեցին Մեղրու տարածաշրջանի գյուղական ու քաղաքային համայնքները, եւ այսօր ունենք Մեղրու խոշորացված համայնք: Անշուշտ, անցումային փուլին բնորոշ խոչընդոտներ ունենք, որոնք կհաղթահարենք եւ կարճ ժամանակ հետո կապացուցենք վարչատարածքային այս փոփոխության առավելությունները:

Ցեռնպահ եմ մնում անցյալում կատարված աշխատանքներին գնահատական տալուց եւ վստահ, ակնկալիքներով լի հայացքով նայում դեպի ապագան:

Սիրելի՛ մեղրեցիներ

Շատ կարեւոր է, որ բոլորիս գործողությունների նպատակը լինի նույնը՝ բարեկեցիկ, առողջ համայնք, զարգացած հասարակություն, ժողովրդի կենսամակարդակի բարելավում: Վստահեցնում եմ, որ տեղական իշխանությունն իր ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահելու ձեր մտահոգություններն ու հոգսերը, հնարավոր ամեն ինչ անելու է ձեր բարեկեցության, մեր համայնքի շենացման, սոցիալական խնդիրների եւ հոգսերի, կենցաղային մտահոգությունների բեռի թեթեւացման համար:

Շնորհավորում եմ բոլորիդ գալիք տոների՝ Ամանորի եւ Սուրբ ծննդի կապակցությամբ:

Թո՛ղ Նոր տարին երջանկություն, սեր ու համերաշխություն բերի բոլորիդ, անցնող տարում մնան բոլոր դժվարություններն ու հոգսերը, եւ թո՛ղ բոլորս դրական ու նոր լիցքերով, սեփական ուժերի հանդեպ վստահության զգացումով մտնենք նոր տարի:

Թո՛ղ 2017 թվականը խաղաղություն, արեւշատություն եւ բարիքների առատություն բերի մեր ընտանիքներին ու մեր երկրին: ■

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Սիսիան համայնքի ղեկավար

Սիրելի՛ սիսիանցիներ

Շնորհավորում եմ ձեզ Ամանորի եւ Սուրբ ծննդյան տոների առիթով: Թող իրականություն դառնան բոլորիդ սպասումները, նվիրական երազանքներն ու հույսերը:

Մի քանի օրից անցյալ կդառնա 2016 թվականը: Սովորաբար տարեմուտին ի մի են բերվում արվածն ու չարվածը եւ նոր ծրագրեր կազմվում հաջորդ տարվա համար:

Անցնող տարին Սիսիանն ամփոփում է փոփոխություններով եւ քաղաքային կյանքում արձանագրված հաջողություններով ու ձեռքբերումներով: Դրանում մեծ է նաեւ ձեր դերակատարումը, քանզի այդ ամենը կյանքի է կոչվել ձեր վստահության, աջակցության, ինչու չէ, նաեւ անմիջական մասնակցության շնորհիվ: Հավատում եմ, որ նույն վստահությամբ շարունակելու ենք աշխատել եւ ունենալու ենք հարմարավետ ու բոլորին տուն կանչող Սիսիան: Աշխատանքային առաջին քայլերս սկսել եմ Սիսիանի մուտքից՝ տեղադրել ենք լուսավառ ցուցանակ եւ ՀՀ եռագույն դրոշը: Տնկվել են արծաթափայլ եղեւնիներ: Թարմացվել է քաղաքի կենտրոնը՝ հրապարակի նստարանները նորացվել են, նոր լուսամփոփներ են տեղադրվել: Առաջիկայում էլ կան նոր ծրագրեր, որի ականատեսը կլինեք դուք:

Սիսիանը՝ մեր՝ սիսիանցիներիս տունն է, մեր մեծ ընտանիքը, որը շատերը լքել էին: Այժմ ուրախությամբ կարող եմ արձանագրել, որ մեր երիտասարդներն արդեն վերադառնում են: Մայրաքաղաքային աշխատանքը թողնելով՝ վերադառնում են՝ աշխատելու Սիսիանում՝ իրենց հայրենի բնօրրանում: Սիսիանը կանչում է բոլորին:

Թող նոր տարին երջանկություն, սեր ու համերաշխություն բերի բոլորիս: Թող յուրաքանչյուր ընտանիքում բացվի հույսի, հավատի եւ անսահման սիրո լույսը: Թող 2017 թվականը բերի նորանոր մանուկների ծնունդ, թող անցնող տարում մնան բոլոր հոգսերը, թող բոլորս նոր լիցքերով, սեփական ուժերի հանդեպ վստահության զգացումով մտնենք նոր տարի:

Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել Ամանորի գիշերը մարտական հերթապահություն իրականացնող բոլոր զինծառայողներին՝ մաղթելով նրանց տոկունություն ու խաղաղ ծառայություն, իսկ նրանց ծնողներին՝ քաջառողջություն ու բարօրություն:

Ուզում եմ առանձնահատուկ շնորհավորանքներս հղել նաեւ Ամանորի գիշերը հերթապահություն իրականացնող անձնակազմերին:

Թող նոր տարին նորություններով, նոր հաջողություններով մտնի յուրաքանչյուրիդ ընտանիքը, եւ թող տոնական սեղանների շուրջ իշխեն բարձր տրամադրությունն ու լավատեսական ոգին:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ ծնունդ: ■



ՏԻԳՐԱՆ ՓԱՐՎԱՆՅԱՆ.

«Երբ հայոց սահմանին վտանգ է սպառնում, ժողովուրդը թողնում է ամեն ինչ եւ դառնում մեկ բռունցք՝ մեկ նպատակով»

էջ 3

կանացվեցին համակարգում:

– Փոփոխություններ շատ են կատարվել, որոնք, իհարկե, հրապարակման ենթակա չեն: Ինչ վերաբերում է դասեր քաղելուն, մենք ոչ միայն ապրիլյան պատերազմից, այլեւ ամեն խաղաղ օրվանից անգամ պետք է դասեր քաղենք: Մենք տեղում չենք դոփում, առաջ ենք շարժվում, ինչի համար պետք է դասեր քաղենք անցյալից, թույլ չտանք սխալներ, որ այսօր ենք թույլ տալիս: Քառօրյա պատերազմով, իհարկե, այլ խնդիրներ առաջացան, որոնց վերացման ուղղությամբ աշխատանքներ էին տարվում նաեւ մինչ այդ: Մեր թերությունների մասին մեզանից լավ ոչ ոք չգիտի, նույն մամուլը պատերազմի օրերին իհարկե զսպվածություն ցուցաբերեց, բայց պատերազմի ավարտից անմիջապես հետո սկսեցին ցեխ շպրտել բանակի գործունեության վրա: Հասկանալի է, որ հնարավոր չէ բոլորին գոհացնել, բայց ես խնդրում եւ պահանջում եմ՝ որեւէ հրապարակում կատարելուց առաջ նախեւառաջ լինել տեղում, ճշտել հանգամանքները, հետո արձանագրել: Չճշտված եւ վատաբանող տեղեկատվությունն ավելի արագ է տարածվում հանրության շրջանում. ասենք՝ զինվորը հեռախոսով խոսելիս ինչ-որ բանից դժգոհեց, դա դարձնում են մատի փաթաթան ու տարածում բոլորի վրա՝ մոռանալով, որ նա կարող է սուբյեկտիվ կարծիք ունենալ: Զինվորը սրբություն է, ով առանց խելամիտ հրամանատարի չի կարող մարտ վարել: Քառօրյա պատերազմի օրերին մեր զինվորները սխրանքներ գործեցին, բայց չմոռանանք, որ նրանց կողքին նաեւ լավ սպա կար: Հավատացնում եմ՝ հայ զինվորը, սպան միշտ պատրաստ են հայրենիքի սահմանները պաշտպանելու, իսկ հրամանատարական կազմը կատարում է իր առջեւ դրված բոլոր խնդիրները:

– Վերջերս ՀՀ նախագահն այցելեց Ձեր ենթակայության զորամասերից մեկը, եթե չենք սխալվում, այնտեղ նաեւ վերազինում է կատարվել: Ինչպե՞ս գնահատվեց զորամասի աշխատանքը:

– Կարող եմ ասել, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում զորամասերի աշխատանքը՝ անձամբ այցելելով եւ տեղում ծանոթանալով: Ինչ վերաբերում է բանակի վերազինմանը, ապա այն անընդհատ իրականացվող գործընթաց է, որ կանգ չի առնում: Նախագահը զորամասի աշխատանքը գնահատել է բավարար:

– Հունիսին, դժբախտաբար, Ձեր զորամիավորումը հայտնվեց նաեւ տարերային աղետի տակ, որ նույնպես այդ օրերի տխուր էջերից է:

– Տխուր էջեր շատ են եղել… Իսկ հունիսի 8-ի եղանակային տարերքն իր տեսակով իսկապես աննախադեպ էր, որը նաեւ մարդկային կյանք խլեց: Ի պատիվ մեր սպայակազմի՝ պետք է նշեմ, որ շատ օպերատիվ աշխատանք կատարվեց, ինչի արդյունքում մարդկային կյանքեր փրկվեցին, խուսափեցինք ավելի մեծ կորուստներից:

– Այն օրերին չէինք ուզում գնահատական տալ կամավորական շարժմանը, միգուցե այսօր գնահատեք նրա դերը:

– Կամավորական շարժումը հայ ժողովրդի համար կարեւոր շարժիչ ուժ է: Զինված ուժեր-հասարակություն նույն օրգանիզմն են, որ մեկ բառով կարելի է անվանել ժողովուրդ, որ երբեք իր աչքերը չի փակում հայրենիքի համար դժվարին ու նեղ պահերին: Արցախյան առաջին պատերազմի մասնակից տղաները, ինչպես նաեւ հայոց բանակում ծառայած սերունդը, առանց տարիքային սահմանափակման, անկախ հնարավորություններից, ներկայացան հավաքակայան՝ մեկ բռունցք դարձած մեկնելով սահման: Հետաքրքիր մի հրապարակման հանդիպեցի այդ օրերին, որտեղ ադրբեջանցի լրագրողը նշում էր, որ այդ օրերին Բաքվից ադրբեջանցիները փախչում էին դեպի Ռուսաստան, իսկ Երեւանից՝ դեպի Արցախի սահման: Մեր մեծությունը, ուժը, այսքան դարեր գոյություն ունենալու գաղտնիքը հենց սրա մեջ է: Հայի ոգին միշտ եղել է անկոտրում. աշխարհի քարտեզից շատ պետություններ վերացան, բայց մենք դեռ կանք ու հազարամյակներով կլինենք, որովհետեւ մեր երակներով Հայկի արյունն է հոսում:

– Ապրիլյան պատերազմի օրերին սահմանամերձ գոտիներում՝ համարյա առաջնագծում, հանդիպեցինք նաեւ կանանց:

– Մեր կանայք, աղջիկները մեզ հետ հավասար ծառայում են թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական պայմաններում եւ երբեւիցե չեն տրտնջում: Արցախյան առաջին պատերազմի տարիներին էլ կանայք եղել են մեր կողքին, աջակցել մեզ, նեցուկ եղել ամեն հարցում: Այն կանայք, ովքեր համազգեստ են կրում, իրենց եւ ոչ մի քայլով հետ չեն մնում սպայից ու հրամանատարից: Երբ նրանք ծառայության են անցնում, քաջ գիտակցում են, որ միայն խաղաղ օրվա համար չեն ծառայում, եթե պետք լինի, տղամարդկանց հետ միասին զենք կվերցնեն:

– Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանն «Ազգ-բանակ» կարգախոսի ներքո հանդես եկավ «1000 դրամի» հիմնադրամ ստեղծելու նախաձեռնությամբ, որի վերաբերյալ հնչեցին ոչ միանշանակ կարծիքներ: Հետաքրքիր է՝ ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքն այս հարցի շուրջ:

– Գիտե՞ք՝ ինչ, ես երբեւիցե գնահատական չեմ կարող տալ ժողովրդի անունից: Ընդամենը հետեւեցի Ազգային ժողովի քննարկումներին եւ քվեարկությանը, բայց իմ կարծիքով, մարդկանց մի խումբ ընդամենը կարծիք հայտնեց, որ իր գոյության մասին հիշեցնի կամ ցույց տա, որ աշխատում է եւ այլն: Իհարկե, հարգում եմ բոլորի կարծիքը, բայց կան հարցեր, որոնց վերաբերյալ պետք է ընդհանուր հայտարարի գանք՝ ելնելով ազգային շահերից: Ոչ ոք երաշխավորված չէ, որ վաղը կարող է չզոհվել կամ վիրավորվել, ուստի նախաձեռնությունը ողջունելի է եւ հեռանկարային: Սպան, զինվորը, կամավորը պետք է վստահ լինեն, որ եթե, Աստված մի արասցե, իր հետ որեւէ բան պատահի, ընտանիքի հոգսը պետությունը կթեթեւացնի: Կարծում եմ՝ ժամանակի ընթացքում շատերը կհասկանան հիմնադրամի ստեղծման անհրաժեշտությունն ու կարեւորությունը. միայն քայլ առ քայլ առաջ շարժվելով՝ կհասնենք հաջողության:

– Ինչպե՞ս եք գնահատում վերջին օրերին սահմանի օպերատիվ վիճակը: Ըստ պաշտոնական լրատվամիջոցների՝ հակառակորդ կողմը սահմանախախտման դեպքերի թիվն ավելացրել է:

– Իրավիճակը շփման գծում միշտ էլ կայուն լարված է եղել թե՛ ապրիլյան դեպքերից առաջ, թե՛ հետո եւ թե՛ այս պահին: Այդ լարվածությունը հիմնականում կապում եմ «հարեւան» երկրի իշխանությունների վարած քաղաքականության հետ: Երբ նրանց իշխանությունները զգում են, որ ժողովուրդը քաղաքական, սոցիալ-տնտեսական հարցեր է բարձրացնում, սահմանին սկսում է իրավիճակը լարել՝ ժողովրդի ուշադրությունը ներքաղաքական վիճակից շեղելու համար: Մենք պետք է զգոն լինենք, որ կարողանանք հնարավոր վտանգը կանխարգելել. թշնամին անընդհատ փորձել է եւ կփորձի սադրել գործողություններ: Նրանց պահվածքը կենդանական բնազդի հետ կարելի է համեմատել. անընդհատ կծել ցանկացող շան ատամներին պետք է անընդհատ խփես, եթե թիկունքդ ցույց տաս, նա անմիջապես կկծի: Մեր թշնամին միայն նմանատիպ համեմատության է արժանի եւ ոչ ավելին:

– Արդեն մի քանի օր է՝ որպես զորամիավորման հրամանատար աշխատում եք զորամասերից մեկում (Կապանի զորամասում), ինչո՞վ է դա պայմանավորված:

– Հիմնականում հաճախ եմ այցելում ենթակա զորամասեր՝ տեղում ծանոթանալու իրավիճակին: Այցելությունս այլ նպատակ է հետապնդում, չմանրամասնենք: Իմ խորին համոզմամբ՝ որեւիցե հարցի արդյունավետ լուծման լավագույն տարբերակն անձամբ ներկա լինելն է, քան հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով ղեկավարելը: Սա իմ աշխատաոճն է եղել եւ այդպես էլ կմնա:

– Ձեր շնորհավորանքը Ամանորի եւ Սուրբ Ծննդի առիթով:

– Հայ ժողովրդին մաղթում եմ խաղաղության, առողջության, ուրախության տարի: Որպես մարզում տեղակայված զորամիավորման հրամանատար՝ կցանկանամ, որ այստեղ լինի խաղաղություն, մարդիկ շարունակեն արարել խաղաղ պայմաններում: Թող այդ խաղաղ օրը չխախտվի զենքի կրակոցներից: Թող ոչ ոք զենքը ձեռքին չվազի սահման, իսկ հայ մարդու համար զենք կարող է դառնալ նույնիսկ եղանը… Թող մեր բժիշկների աշխատանքը պակասի, հիվանդությունները նվազեն, ուժային կառույցների գործը քչանա, բոլոր տեսակի զենքերը կրակեն միայն զինավարժարաններում: Բայց միեւնույն ժամանակ երբեւիցե չպետք է կորցնենք մեր զգոնությունը եւ ամեն վայրկյան պատրաստ լինենք մեր զենքերի փողերն ուղղելու դեպի հակառակորդը եւ այնպես անելու, որ իր գոյության ողջ ընթացքում հիշի մեր տված դասը: Իմ զինվորին, սպային, կառույցի յուրաքանչյուր աշխատակցի մաղթում եմ առողջություն, բարի ծառայություն եւ բարի վերադարձ իրենց սուրբ օջախներ:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱԼԵՐԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ.

«2017-ին բոլորին ցանկանում եմ անփորձանք ծառայություն»

էջ 3

զինվորներն իրենց խնդիրը կատարել էին: Մնացյալն արդեն բարոյահոգեբանական մթնոլորտի բարձրացմանը, կրտսեր ընկերների կողքին կանգնելուն էր առնչվում:

– Ձեր հրամանատարության ներքո գտնվող զորամիավորումում ի՞նչ է արվում բանակ-հասարակություն կապը սերտացնելու, բանակի հանդեպ վստահությունն ամրապնդելու գործում:

– Բանակի հանդեպ վստահությունն ամրապնդելու համար ոչ մի բան պետք չէ անել, պարզապես պետք է ծառայել հայրենիքին, ինչպես հարկն է, երբեք առիթներ չստեղծել, որ ժողովուրդը փոքր-ինչ կասկածի զինվորի մարտունակության, բանակի հզորության եւ այն խնդիրների առնչությամբ, որ դրված են բանակի առջեւ՝ ապահովել ժողովրդի անվտանգությունը, մեր երկրի անկախությունը, իր հայրենի հողի վրա ստեղծելու, արարելու նրա ցանկությունը: Պարզապես պիտի ծառայել, ինչպես նախատեսված է սահմանադրությամբ ու զինվորական կանոնագրքով:

– Նախորդ հարցը պատահականորեն չի տրվել: Բանակը եթե չզգա, որ իր թիկունքում ժողովուրդ կա, կբարոյազրկվի, այլապես ո՞ւմ է նա պաշտպանում: Իսկ եթե բանակի ներկայությունը չլինի սահմանում, ժողովուրդը կուլ կգնա թշնամուն: Փոխադարձաբար կապված են իրար, մեկը մյուսից անջատ հնարավոր չէ պատկերացնել:

– Ոչ մի պետության մեջ բանակն առանց ժողովրդի չի կարող լինել, քանզի այն կոչված է ժողովրդին պաշտպանելու թշնամու ոտնձգությունից: Բանակի թիկունքում կանգնած է ժողովուրդը: Նրանից առաջ սահմանին կանգնած է բանակը, այդ կապը պիտի ամուր լինի, վստահությունը պիտի փոխադարձ լինի, որ երկուստեք իրենց վերապահված գործառույթները կատարեն: Այսօր ծավալուն աշխատանքներ են կատարվում, բավականին լուրջ միջոցառումներ են կազմակերպվում, որ առավել սերտ լինի բանակ-հասարակություն-ազգ եռամիասնությունը, առանց որի ոչ մի նպատակ չի կենսագործվի: Որ ժողովուրդը վստահ լինի իր վաղվա օրվա հանդեպ, կառչի իր հողից, իր երկրից: Ուրախ եմ, որ շինական թե աշխատավոր կանգնած են բանակի թիկունքին: Կարող եմ նշել նաեւ կազմակերպությունների անուններ՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերություն (գլխավոր տնօրեն՝ Մհեր Պոլոսկով), «Մեղրու ճանապարհների շինարարություն եւ շահագործում ձեռնարկություն» ՍՊ ընկերություն (տնօրեն՝ Ազատ Գասպարյան), Մեղրու քաղաքապետարան (համայնքապետ՝ Մխիթար Զաքարյան): Այս օժանդակությունն անչափ ոգեւորում է զինվորականությանը:

– 2017 թվականի նախաշեմին ենք, նախեւառաջ, ի՞նչ կմաղթեք զինվորների ծնողներին, մտերիմներին, ի վերջո հրամանատարն էլ ժամկետային զինվորի ծնողն է:

– Բնականաբար, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող յուրաքանչյուր հրամանատար ինքն էլ ծնող է, պիտի զինվորի հանդեպ ցուցաբերի հոգատարություն, միեւնույն ժամանակ լինի պահանջկոտ: Երկրորդ՝ հայերս ինչ-որ առումով եզակի ազգ ենք՝ եւ հայրենապաշտ ենք, եւ զավակապաշտ, բնականաբար, այդ ամենը հոսում է հայի երակներով: Յուրաքանչյուր ծնող, ազգային բանակ ուղարկելով իր որդուն, ակնկալում է մի բան. նախ՝ լինի խաղաղություն, երկրորդ՝ իր զավակն ավելի առնականացած, տղամարդ դարձած վերադառնա իր ընտանիքի գիրկը: Անչափ ուզում եմ, որ զինվորների ծնողների այդ ցանկությունն իրականանա, զինվոր որդու հետ կապված սպասելիքներն արդարանան: Յուրաքանչյուր ծնող դիմավորի իր որդուն, մյուս հաճելի իրադարձությունները հետո կլինեն՝ ուսում, ամուսնություն, զավակներ եւ այլն: Բոլոր հրամանատարների խնդիրն է պայմաններ ստեղծել, որ ժամկետային զինծառայողները, կատարելով սահմանադրական պարտքը, ողջ-առողջ վերադառնան հայրենի օջախները:

– Եվ, ի վերջո, Ամանորի ու Սուրբ Ծննդի առիթով ի՞նչ կմաղթեք հրամանատարներին, զինվորներին, հատկապես նրանց, ովքեր Ամանորի գիշերը մարտական հերթապահության են լինում խրամատում:

– Ամանորի գիշերը բոլոր հրամանատարներս, բնականաբար, խրամատում ենք լինելու, զինվորների կողքին, որտեղ առաջինն ենք շնորհավորելու նրանց Նոր տարվա առթիվ, անդրանիկ մաղթանքները փոխանցելու նրանց, իսկ ընդհանրապես իմ հրամանատարներին եւ զինվորներին կցանկանամ՝ նախեւառաջ խաղաղություն, մարտական խնդիրների կատարման գործում՝ հաջողություններ, որ 2017-ին մի քանի քայլով բարձրանա բոլոր ստորաբաժանումների մարտունակությունը: Յուրաքանչյուր զինվոր իր տան ճրագն է, հույսն ու ապավենը, ուստի ցանկանում եմ ոչ մեկի գլխից մի մազ անգամ չպակասի, մի խոսքով՝ բոլորին անփորձանք ծառայություն:

Զրույցը՝ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Հրե աքաղաղի տարին՝ արեւելյան ասպղագուշակով



Արեւելյան օրացույցի համաձայն՝ 2017 թվականին հավակնոտ Հրե կապիկին փոխարինելու կգա մի նշան, որը խոստանում է առավել հաջող եւ հիշվող լինել: 2017թ. Հրե աքաղաղի տարին կլինի: Գալիք տարում մեզանից յուրաքանչյուրին ինչ-որ առանձնահատուկ բան է սպասվում: Սակայն առավել հաջող տարի կլինի հենց Աքաղաղի տարում ծնվածների համար, քանի որ նրանք 12 ամիս շարունակ կգտնվեն այս հիասքանչ եւ հպարտ թռչնի հովանավորության ներքո:

Նշանի հատկանիշները

Արեւելյան օրացույցով Աքաղաղն ամենավառ, ամենանրբագեղ եւ ամենաշփվող նշաններից է: Նա շատ է սիրում ուշադրություն սեփական անձի հանդեպ եւ դեմ չէ ամեն տեսակ հաճոյախոսություններին: Մշտապես գտնվում է հակառակ սեռի ուշադրության կենտրոնում: Սակայն նրանք հազվադեպ են որեւէ մեկի նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերում եւ նախընտրում են լռել իրենց զգացմունքների մասին:

Սակայն չնայած նման կոպտությանը՝ Աքաղաղները բավական հաջողակ են սիրային հարցերում, ինչպես նաեւ աշխատանքում: Սուր մտքի, ընբռնողության եւ գրավչության շնորհիվ հեշտությամբ նոր ծանոթություններ են հաստատում, անհրաժեշտ պայմանագրեր ստորագրում: Նրանք համառությամբ են օժտված եւ իրենց նպատակներին հասնելու համար պատրաստ են ամեն ինչի: Հրե աքաղաղը սիրում է հրամայել, տաքարյուն է եւ միշտ նախընտրում է բարձրաձայնել այն ամենի մասին, ինչ մտածում է: Բավական հազվադեպ են ամուր ընտանիքներ կազմում: Նրանք չեն կարող իրենց ամբողջ կյանքը մեկ այլ անձի նվիրել եւ նախընտրում են միայն ընդունել իրենց երկրորդ կեսի սերը: Իսկ նման հատկանիշները շատ հաճախ կարող են ուղղակիորեն հարաբերությունների խզման եւ ամուսնալուծությունների հանգեցնել: Աքաղաղի հետ առավել համատեղելի նշաններն են Ցուլերը եւ Օձերը:

Ինչպե՞ս ընկերանալ Հրե աքաղաղի հետ

Առաջին հերթին այդ զգացմունքային եւ տաքարյուն նշանին դուր գալու համար պետք է մտածել այն մասին, թե ինչ հագուստով է անհրաժեշտ դիմավորել Նոր տարին: Ցանկալի է ընտրություն կատարել վառ, նորաձեւ եւ թանկարժեք հագուստների օգտին: Հագուստը պետք է կարմիր, դեղին, նարնջագույն երանգների լինի, սակայն չպետք է մոռանալ նաեւ նրբագեղության մասին: Հագուստի բոլոր դետալները պետք է իրենց տեղում լինեն եւ համադրվեն անհրաժեշտ աքսեսուարների հետ: Հնարավորության դեպքում կարելի է ոսկյա թանկարժեք զարդեր կրել, քանի որ Աքաղաքն ուղղակիորեն խենթանում է դրանց համար:

ԵԴԻՇԵ ՉԱՐԵՆՑ

¾ÉÇ • ³ ñáõÝ Ï • ³

Էլի գարուն կգա, կբացվի վարդը,
Միրեկանը էլի յարին կմնա:
Կտոխվին տարիքը, կտոխվի մարդը,
Բլբուլի երգն էլի՛ սարին կմնա:

Ուրիշ բլբուլ կգա կմտնի բաղը,
Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը,
Ինչ որ ե՛ս չեմ ասե - ն՛ա կասե վաղը.
Օրերը ծուխ կըլին, տարին կմնա:

Հազար վարդ կբացվի աշխարհի մեջը,
Հազար աչք կթացվի աշխարհի մեջը,
Հազար սիրտ կխոցվի աշխարհի մեջը -
Էշխը կրակ կըլի՝ արին կմնա:

Ուրիշ սրտի համար կհալվի խունկը,
Կբացվի շուշանը, վարդերի տունկը.
Գոգալը լաց կըլի, կընկնի արցունքը -
Գերեզմանիս մարմար քարին կմնա:

2017թ. ասպղագուշակը կենդանակերպի բոլոր նշանների համար

Խոյեր

Այս նշանի ներքո ծնված մարդիկ գալիք տարում անհավանական էներգիայի հոսք կզգան՝ չնայած այն հանգամանքին, որ նրանց նաեւ կարող է վտանգ սպառնալ: Անհանգստանալու պատճառներ չկա՝ բոլոր գործերն իրենց հունով կընթանան՝ համաչափ եւ նույնիսկ անտարբեր, սակայն ծայրահեղ զգուշավորություն պետք է պահպանել: Հակառակ դեպքում ճակատագիրը կարող է անսպասելի հարված հասցնել: Լավագույն մարտավարությունը, որին Խոյերը պետք է հավատարիմ մնան, սպասումն է: Պետք չէ շտապել՝ կյանքը նրանցից չի փախչի եւ արդյունքում նրանք կպահպանեն այն ամենը, ինչ ունեն:

Ցուլեր

Այս տարին բոլոր Ցուլերի համար խոստանում է արդյունավետ լինել: Տարվա սկզբին անհրաժեշտ կլինի զգոնություն ցուցաբերել ցանկացած գործում, որին ձեռնամուխ կլինեն: Տարին Ցուլերի համար նախեւառաջ ճակատագրի անսպասելի նվերներով կհիշվի: Դրանք կարող են արտացոլվել ամենատարբեր ոլորտներում՝ գործնական, սիրային, ընտանեկան:

Երկվորյակներ

2017թ. Երկվորյակներին խորհուրդ է տրվում առաջին հերթին ժամանակ տրամադրել ընտանիքին: Հարազատների եւ մտերիմների հետ փոխհարաբերություններն առաջին պլանում կհայտնվեն՝ ճնշելով աշխատանքի հետ կապված պլանները, զվարճանքներն ու ուսումը: Շատ հավանական են սիրային արկածները, որոնց մասին Երկվորյակներն անգամ չէին էլ մտածում: Եվ մեկ կարեւոր պահ, որին պետք է ուշադրություն դարձնել, հստակ ժամանակահատվածում հին եւ երկարածգված խնդիրների լուծումն է, ինչպես նաեւ կարեւոր որոշումների կայացման անհրաժեշտությունը:

Խեցգետիններ

Թեթեւակի լարվածությունը 2017թ. մշտապես առկա կլինի այս նշանի տակ ծնվածների կյանքում: Հնարավոր է նրանց կյանքում մանր խնդիրներ առաջանան, որոնց համար անհրաժեշտ կլինի կրկնապատկել իրենց ուժերն ու քաջությունը: Այդ բոլոր խոչընդոտներից հետո խեցգետինների կյանքում լիակատար հանգստության շրջան կսկսվի: Խեցգետինները որոշ հարցերում իրենց լավագույնս դրսեւորելու հնարավորություն կունենան:

Առյուծներ

Առյուծները 2017թ. աշխատանքի հետ կապված որոշակի խնդիրներ կունենան: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է առավելագույն զգոնություն դրսեւորել պայմանագրերի կնքման եւ այլ փաստաթղթերի հետ աշխատանքի ընթացքում: Առյուծների համար մեկ այլ վտանգավոր ոլորտ կարող է ընտանիքը դառնալ: Անհրաժեշտ է հետեւել սեփական քայլերին, խոսքերին, որպեսզի հնարավոր լինի խուսափել վիճաբանություններից: Ցանկալի կլինի խուսափել հարաբերությունները պարզելուց եւ սպասել, որպեսզի կրքերը հանդարտվեն:

Կույսեր

Այս տարին խոստանում է Կույսերի համար բավական զգացմունքային, իմպուլսիվ եւ դյուրագրգիռ լինել: Կենդանակերպի այս նշանի ներկայացուցիչներին խորհուրդ է տրվում խուսափել նյարդայնանալուց, որպեսզի առավել մեծ խնդիրներ չստեղծեն իրենց համար: Նրանք ստիպված կլինեն ջանքեր գործադրել նյարդային համակարգը կարգի բերելու հարցում: Ցանկալի կլինի կենտրոնանալ որեւէ չեզոք օբյեկտի վրա, որը կօգնի Կույսերին զսպել սեփական էմոցիաները: Այսպես օրինակ, կարելի է շուն ձեռք բերել:

Կշեռքներ

2017թ. Կշեռքների համար լավագույն ժամանակաշրջանը կլինի իրենց բոլոր ավարտված եւ անավարտ գործերն ամփոփելու համար: Բոլոր այն հարցերը, որոնք բավական երկար ժամանակ տանջել են ձեզ, ինքնուրույն լուծում կստանան: Կենդանակերպի այս նշանի ներկայացուցիչները պետք է զգուշանան նաեւ հանկարծակի ծագած խնդիրներից: Այդ խնդիրները կարող են հեշտությամբ նրանց հունից հանել, հենց այդ պատճառով ցանկալի կլինի չտրվել ճակատագրի սադրանքներին եւ համբերությամբ զինվել:

Կարիճներ

2017թ. ընթացքում Կարիճները կարող են փոփոխությունների եւ հաճելի անակնկալների շրջան ապրել: Այդ ընթացքում նրանց բազմաթիվ կարեւոր բացահայտումներ եւ իրադարձություններ են սպասվում: Ինչ վերաբերում է հարաբերություններին, ապա Կարիճներին անհրաժեշտ է չեզոքություն եւ ընկերասիրություն դրսեւորել: Այդպիսով նրանց կհաջողվի ստանալ ընկերների եւ հարազատների աջակցությունը, որը երբեմն շատ օգտակար կարող է լինել: Կարիճները պետք է դադարեն մարդկանց չափազանց շատ վստահել:

Աղեղնավորներ

2017թ. խոստանում է չափազանց հաջող լինել Աղեղնավորների համար: Պետք է փորձել օգտվել ընձեռված բոլոր հնարավորություններից եւ հաջողությունը ձեռքներից բաց չթողնել: Անսպասելի հաճելի եւ ռոմանտիկ պահերը շատ կլինեն նրանց կյանքում, որոնք երկար ժամանակ կմնան նրանց հիշողության մեջ: Հրե աքաղաղի տարին խոստանում է նոր եւ օգտակար ծանոթություններով լի լինել:

Այծեղջյուրներ

2017թ. ընթացքում կենդանակերպի այս նշանի ներկայացուցիչներն առավելագույն ակտիվություն կցուցաբերեն: Կյանքը նոր ծանոթություններով, գաղափարներով եւ արկածներով լեցուն կլինի: Պետք է կարողանալ օգտվել այդ հնարավորությունից եւ հաճելի ժամանակ անցկացնել: Չպետք է թուլանալ, քանի որ հնարավոր է դավաճանության հետ բախվել: Սակայն դա ավելի լավ կլինի, քանի որ դավաճանող մարդը կհեռանա Այծեղջյուրի կյանքից՝ հանգստություն եւ թեթեւություն պարգեւելով:

Ձրիոսներ

2017թ. ընթացքում Ձրիոսները շատ հաճախ անցյալի մասին կմտածեն, կսկսեն վերլուծել նախկինում ընդունած որոշումները: Հնարավոր է անգամ, որ հին գործերն իրենց մասին հիշեցնել տան եւ անհրաժեշտ լինի մեծ ջանքեր գործադրել դրանք լուծելու համար: Անգամ վաղեմի ծանոթները կարող են անսպասելիորեն կրկին հայտնվել ձեր կյանքում: Իսկ դա մեծ հաջողություն է տեսնել նրան, ում վաղուց արդեն չեք հանդիպել:

Ձկներ

Ձկների համար Հրե աքաղաղի տարին խոստանում է դինամիկ ժամանակաշրջան լինել: Տարվա ընթացքում բազմաթիվ իրադարձություններ են սպասվում: Ձկներն առավելագույն հաճույք կստանան դեպքերի նման ընթացքից, քանի որ նման ռիթմը հենց նրանց համար է: Չպետք է խուսափել շրջապատի հետ շփումներից:

ankakh.com

Այունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 26.12.2016թ.: